ԳԼՈՒԽ ՄԾԹ.

Ով ոք մանկապահ որպէս ռամկօրէն դէտայ, եթէ խառնակեսցի ընդ արու մանուկն իւր 6 շաբաթ մտցէ բանտ, և ամենայն աւուր հինգ շաբաթի մերկացուցանել նմայ 'ի փողոցս շրջելով արբեցուցանեն վաթսուն դամչի 'ի տեղի փափուկ մսի նորա, և յետ վեց շաբաթու հերծցեն հեր գլխոյ նորա և արձակեն նմայ խայտառակութեամբ։

ԳԼՈՒԽ ՄԿ.

Ամենեքեան եթէ վաճառական, եթէ զինուոր, եթէ արհեստաւոր հովիւ և հողագործ և զոր ինչ աստիճանի իշխան և որում արհեստի արհեստաւոր, զոր ինչ որ գնեսցի հաւանելով բանին և գնին իրաց գնելոց, պարտ են գնող և վաճառողն ձեռս ընդ միմեանց տալով հաստատեսցեն առաջի դալալի առ 'ի վկայութիւն առք և ծախսն, և ամենայն զոր ինչ ձեռնատուութիւն միմեանց եղելոց վաճառողն վաճառեալ է և գնողն գնեալ կըրկին յետս մէ դարձցի։

ԳԼՈՒԽ ՄԿԱ.

Որում ձեռի գտցի ստատիպ դրամ եթէ ոսկոյ եթէ երծաթոյ և կամ պղնձի և կապարի